

Կոչ՝ Գանատահայության

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտեն յառաջացուցած է Լիբանանահայության Օժանդակության Մարմին

Սիրելի հայրենակիցներ,

Քաղաքացիական պատերազմի եւ բազմապիսի տաղանակներու բովանդակ անցած Լիբանանի ժողովուրդը, այսօր կը գտնուի ճգնաժամային վիճակի մէջ: Ներքաղաքական զարգացումները՝ անցնող տարուէն անվերահսկելի դարձուցած են երկրին տնտեսութիւնը ու զայն կաթուածահար բրած: Այս կացութեան եկած է աւելնալու քորոնավիրուսի պարտադրած իրավիճակը՝ կրկնակիօրէն՝ սրելով տագնապը: Պարզ քաղաքացիին պարտադրած է օրապահելի ձեռքբերումը կ'ընթանայ հեղձուցիչ պայմաններու մէջ: Ըստ պաշտօնական տուեալներու՝ կը նախատեսուի, որ մինչեւ տարեկիւրջ աղքատութեան չափանիշը կ'աճի երկրի բնակչութեան կէսը:

Լիբանանի հայութիւնը բնականաբար անմասն չէ մնացած այս ծանր իրադրութենէն: Անհատական թէ՛ հաւաքական առումով՝ Լիբանանահայ կեանքը կը քառնէ տնտեսական ծանր ճգնաժամին, քառապատկուած սղաճին ու համաճարակի առթած ազդեցութեան ներքեւ: Կենցաղային պայմաններու անկանխատեսելի հետեւանքներուն եւ ապագայի անորոշութեան դէմ յանդիման կը գտնուին մեր հայրենակիցները: Այս գծով, գաղութի կարիքաւոր անդամներուն օգնութեան ձեռք երկարած հայկական բարեսիրական հաստատութիւններն ու կազմակերպութիւնները իրենց ճիգերը բազմապատկած են, սակայն անոնք եւս կը գործեն տագնապի պատճառած անձուկ պայմաններուն մէջ:

Լիբանանահայութեան ներկայ կացութեան, առկայ մարտահրաւէրներուն եւ անոր ապագային սպառնացող

վտանգին ի տես, այսօր չենք կրնար ձեռնածալ նստիլ: Պահն է գործի անցնելու: Առ այդ, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտեն, իր բոլոր կոմիտէներու, երիտասարդական-ուսանողական ու պատանեկան միաւորներու, ուղեկից կազմակերպութիւններու եւ Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնարդարանի ներկայացուցիչներով յառաջացուցած է Լիբանանահայութեան Օժանդակության Մարմին: Համատեղուած ուժերով ու զօրաշարժով, այս Մարմինը շուտով հանդէս պիտի գայ իր յայտարարութեամբ ու հանգանակային աշխատանք պիտի ծաւալէ ամբողջ Գանատայի տարածքին:

Հայրենակիցներ,

Վստահ ենք, որ ինչպէս անցեալին, այսօր նոյնպէս, մենք, որպէս Գանատահայ կազմակերպ ու կենսունակ համայնք, պիտի չզլանանք մեր անմիջական աջակցութիւնը ցուցաբերել տագնապահար կացութեան մէջ գտնուող մեր քոյրերուն եւ



եղբայրներուն:

Արդ, կը դիմենք իւրաքանչիւր գանատահայ հայրենակիցի, որ մասնակցի նուիրահաւաքի այս արշաւին, որպէսզի միասնաբար կանգնինք Լիբանանի մեր հայրենակիցներու կողքին:

ՀՅԴ ԳԱՆԱՏԱՅԻ ԿԵՂՈՒՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

ՀՕՄ-ի Գանատայի Ծրցանը իր 10 մասնաճիւղերու եւ անդամներու օժանդակութեամբ 15,000 ամերիկեան տոլար կը նուիրէ Լիբանանահայության անմիջական օգնութեան

Լիբանանի քաղաքական անկայունութեան առ ի հետեւանք, տնտեսական տագնապ ապրող մեր հայրենակիցներուն օժանդակելու միտումով՝ ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը աշխարհասփիւռ իր միաւորներուն եւ սփիւռքահայութեան կողմէն օգնութեան ձեռք երկարելու Լիբանանի մեր հայ ժողովուրդին, որոնք տնտեսական տագնապ կ'ապրին այս օրերուն, եւ գործազուրկ աղէտի պատճառաւ, առաւել եւս վատթարացած է անոնց աօրեան:

ՀՕՄ-ի Գանատայի Ծրցանային Վարչութիւնը ընդառաջելով Կեդրոնական վարչութեան կոչին, անմիջապէս զօրաշարժի ենթարկեց իր մասնաճիւղերու վարչութիւններն ու անդամները, որոնց միասնական ջանքերով հանգանակուեցաւ 15,000 ամերիկեան տոլար: Հանգանակուած այս գումարներով, մենք օժանդակած կ'ըլլանք Լիբանանի Օգնութեան Խաչի ծրագիրներուն՝ «Պնակ մը կերակուր» \$500, միօրեայ տաք ճաշ 150 հոգիի, «Յոյսի արկղ» \$150, մէկ ամսուայ ուտեստեղէնի սնտուկներ կարիքաւոր իւրաքանչիւր ընտանիքի եւ «Գոյատեւման պիտոյքներ» \$250 բարեկեցիկ կեանք ապահովելու մէկ ամսուայ ուտեստեղէն, դեղորայք եւ հիմնական պիտոյքներ:

Մեր գործունէութիւնը սակայն իր լրումին չէ հասած եւ հանգանակութիւնները կը շարունակուին: Առ այդ, կողմէնք Գանատայի տարածքին մեր անդամներուն եւ ազգայիններուն, օգնութեան ձեռք երկարելու Լիբանանահայութեան անմիջական օգնութեան այս շատ կարեւոր ծրագրին:

ՀՕՄ-ի Գանատայի Ծրցանային Վարչութիւնը կու գայ իր խորին շնորհակալութիւնները յայտնել բոլոր նուիրատուներուն, որոնք ճգնաժամային այս օրերուն նեցուկ կը կանգնին մեր հայրենակիցներուն:

Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Ծրցանային Վարչութիւն

ՀՅԴ Արցախի Կեդր. Կոմիտէի յայտարարութիւնը

Սիրելի հայրենակիցներ,

Արցախում առաջին անգամ կայացած համաժամանակեայ խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւնների արդիւնքներով այժմ կազմաւորուած են երկրի գործադիր եւ օրէնսդիր նոր իշխանութիւնները:

2020թ. ապրիլի 9-ի յայտարարութեամբ տեղեկացրել ենք ԱՀ Ազգային Ժողովի ընտրութիւնների կապակցութեամբ մեր գնահատականների եւ նախագահական ընտրութիւնների երկրորդ փուլում ՀՅԴ դիրքորոշման մասին:

Նկատի ունենալով համապետական ընտրութիւնների եւ ընտրուած նախագահի հետ բանակցութիւնների արդիւնքները՝ նպատակայարմար չենք գտնում մաս կազմել ձեւաւորուող կառավարութեանը:

2019թ. յուլիսի 7-ին եւ օգոստոսի 30-ին ՀՅԴ հրապարակած քաղաքական միասնական օրակարգի առաջնահերթութիւնների եւ նախընտրական ծրագրի հիման վրայ յարաբերութիւններ ենք կառուցելու ինչպէս քաղաքական ուժերի, այնպէս էլ Արցախի Հանրապետութեան իշխանութիւնների հետ:

Յոյսով ենք, որ նոր իշխանութիւնները ջանք չեն խնայի յաջողութիւններ արձանագրելու ներքաղաքական խորհրդակցութիւնների ընթացքում առաւել կարեւորուած՝ պետականութեան ամրապնդման, անվտանգութեան ապահովման, Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման, Սամանադրական բարեփոխումների, Հայաստանի Հանրապետութեան հետ ուղղաքաղական դաշինքի իրաւապայմանագրային ամրագրման, տնտեսական զարգացման, սոցիալական արդարութեան հաստատման, վերաբնակեցման եւ ժողովրդագրական իրավիճակի բարելւման ուղղութիւններով:

ՀՅ Դաշնակցութիւնն իր համահայկական կառուցող հաստատակամօրէն շարունակելու է ներդրում ունենալ հայրենիքի բարգաւաճման գործում: ՀՅ Դաշնակցութեան ելակէտային ուղեւիշը եղել եւ մնում է ազատութեան, արդարութեան, ազգային ու համամարդկային արժէքների ամրակայումը եւ ներագագային համերաշխութեան ապահովումը:

ՀՅԴ Արցախի Կեդրոնական Կոմիտէ



HONDA
GABRIEL

Your Passport to Adventure.

2018 Passport TOURING
Selling start from **\$50,900***
LEAP ON IT!

Book your test drive with
Tro Bachejian

7000, boul. Henri-Bourassa E.
Montréal, QC H1G 6C4
514 - 327 - 7777
www.hondagabriel.com



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

★ IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Լիբանանահայությանը Տագնապը. Ի Հարկ Է՛

Լիբանանահայությունը ճգնաժամային օրեր կ'ապրի: Այս անգամ սուրացող փամփուռները չեն տագնապին աղբյուրը: Զբաղորդվելը, անգործությունը, աշխատանքի հեռացումը կամ կէս աշխատավարձերը, որոնք զգեստնած են հասարակության գոյատևման կարողականությունը, նաև ասոնց վրայ գումարելով «Քորոնա» ժահրը, ստակի կախարդական խաղաղամբ, քաղաքական ճգնաժամը եւ եթերացած պատեհությունները, որոնք համատարած դարձած են:

Մեր ժողովուրդը գործունեայ է, աշխատասէր եւ քարը հացի վերածող: Բայց, երբ աղէտը կը հարուածէ բոլոր ճակատներէն՝ անդամալուծելով ամբողջ տարածաշրջան մը յարատեւ բռնություն վախի քողով, գումարած սեփական շահի օգտագործման անկարողությունը եւ բարդուած անախաղէպ ու անակնկալ ժահրով մը՝ հետեւանքը կ'ըլլայ աներեւակալիւթի օրէն աղէտալի եւ անողորմ հաւաքական պատիժ:

Այս է Միջին Արեւելքի մեր ժողովուրդին իրավիճակը այս օրերուն, յատկապէս՝ Լիբանանի մէջ:

Երեւակայեցէք, երբ արգելափակումը մասամբ վերցուած է՝ արտօնելով կրթական հաստատություններու վերաբացումը, նոյն ատեն ծնողներու անճրկած շփոթը՝ իրենց զաւակներուն կրթաթոշակները հայթայթելու անկարողութեան պատճառով:

Երեւակայեցէք ուսուցիչներ, որոնք իրենց աշխատավարձերուն կէսը կը ստանան, մինչ անհրաժեշտ պարուտի գիները եռապատկուած են:

Այս նկարագրությունները մութ դարերուն չեն պատկանիր եւ ոչ ալ տիրահաշակ Օսմանեան կայսրութեան օրերուն, այլ յառաջագէտ 21-րդ դարուն, որուն գալուստը միասնաբար ջերմութեամբ ողջունեցինք:

Լիբանանահայ գաղութի ներկայ իրավիճակը խիստ ծանր է, իսկ անոր անմիջական կարիքները՝ աներեւակալիւթի օրէն հակա:

Մեր ճիտին պա՛րտքն են ազգային գիտակցութեան դրսեւորումը եւ մարդկային պարտաւորութեան հարկադրանքը, նաև հաւաքական օգնութեան ձեռք երկարելը՝ վանելու ամէն վախ եւ կենդանութեան յոյս ներշնչելու գաղութի զաւակներուն:

Աստուած կը յորդորէ մեզ՝ կատարելալ սէր ցուցաբերել՝ վանելու համար ամէն վախ: Վախի վերացումը եւ վհատութեան տապալումը կենդանութեան նախապայմանն ու գրաւականն են:

Միացէք մեր ջանքերուն՝ աջակցելու վիրաւոր լիբանանահայութեան, ձեր նախախրած ճամբով կամ Ամերիկայի Հայ աւետարանչական ընկերակցութեան (ԱՀԱԸ) խողովակով՝ AMAA 31 W. Century Rd., Paramus, NJ 07652, ապահովելու համար Միջին Արեւելքի մեր գաղութներուն առողջութիւնը, սերունդներու կրթութեան ապահովումը կամ լոկ հայ մարդու կեանքի ամենատարրական կարիքներու գոյացումը:

Համատարած հայութեան առատաձեռն նուէրները անպայման պիտի օժանդակեն լիբանանահայուն գոյատևման դժինք պայքարի յաղթանակին:

Լիբանանահայութեան փրկութեան ձեռք երկարելը անհրաժեշտութիւն է:

Ի հարկէ՛:

ԶԱԻԷՆ ԽԱՆՃԵԱՆ

Ամերիկայի Հայ Աւետարանչական ընկերակցութեան Գործադիր Տնօրէն

Ծնորհակալիք

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հովիւն ու Հոգաբարձութիւնը խորին շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր այն կազմակերպութիւններուն ու հիմնադրամներուն, որոնք այս օրերուն չխնայեցին իրենց աջակցութիւնը մեր վարժարանին ու եկեղեցիին: Ստորեւ կը յիշենք նուիրատու կազմակերպութիւններն ու հիմնադրամները իրենց ներդրումով.

Ս. ՅԱԿՈԲ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՖՈՆԸՏԻՆ	
ՀՕՄ-ի «Շուշի» մասնաճիւղ	15,000
ՀՕՄ-ի «Սօսէ» մասնաճիւղ	60,000
«Բաստրմաճեան» Հիմնադրամ	45,000
ՀՕՄ-ի Գանատային Շրջանային	17,000
Հայ Կեդրոնի Տարեցիներու Միութիւն	9,725
Հայ Կեդրոնի Պրիճի Ակումբ	5,500

Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
«Ժանին Հէլըր» Հիմնադրամ ամ. 20,000

Այցելեցէք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցէք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը

HITUNES.CA

Ունկնդրեցէք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցէք շահեկան հարցազրոյցներ

TRIKTRAK.CA

Voyages **HAIG** Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ **(514) 284-7676**

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

Հուրի, սուրի, համաճարակի եւ սովի յորձանուտէն յառնած մայիսեան անկախութիւնը

«Ամբողջ հալոց պատմութիւնը հայ ժողովրդի անկախութեան պայքարն է»
Լեւոն Ծաւր



1918ին հայ ազգի գոյապահպանման համար մղուած ճակատամարտները շրջադարձային նշանակութիւն ունեցան մեր պատմագրութեան մէջ՝ դառնալով մերօրեայ հայկական պետականութեան ձեւաւորման հիմաստներ:

Անուրանալի փաստ է, որ այսօրուան Հանրապետութիւնը հիմնուած է դար մը առաջ արեւահեղ գուպարով յառնած 1918 թուականի Մայիս 28ի անկախ պետութեան հիմքին վրայ:

1918 թուականի Յունիս 4-ին կայացած Պաթմոմի դաշնագրով Թուրքիան կը ճանաչուար Սեւանի աւազանին շուրջ տարածուած 11 հազար քառակուսի քմ. տարածքով Հայաստանի Հանրապետութիւնը:

Նման դժնդակ պայմաններու մէջ յառաջ գնաց բանակաշինութեան գործը, ձեւաւորուեցան սպայակազմը, մասնազիտացած զօրամասերը, սահմանապահ գունդերը: Կարճ ժամանակահատուածի ընթացքին կայացած իրողութիւն էր նորանկախ երկրի պաշտպանութեան երաշխիքը հանդիսացող կանոնաւոր ազգային բանակը, որուն վիճակուած էր ազատագրելու հայապատկան հողատարածքները: Եւ իրապէ՛ս, կարճ ժամանակահատուածի ընթացքին, Հայկական բանակը ընդլայնեց պետականութեան սահմանները, հայրենի սահմաններուն մէջ ներառելով Լոռին, Ալեքսանդրապոլի գաւառը, Շարուրը, Նախիջևանը Սուրմալուն ու Կարսի նահանգը: Միաժամանակ, հայկական զինուած ուժերը ստիպուած էին դիմադրուել թրքական, ատրպէյճանական եւ վրացական ոտնձգութիւնները:

11 հազար քառակուսի քմ. տարածքով սկիզբ առած պետութիւնը՝ 1920ին եօթնապատկուած, ընդարձակուած եւ վերածուած էր 70 հազար քառ. քիլոմետրով անկախ պետութեան:

Հայաստանի առաջին հանրապետութեան առաջին տարին յատկանշուեցաւ նաև մահափառ բռնաւոր տիֆի համաճարակի տարածումով, որուն զոհ գնաց Հայաստանի բնակչութեան 20 տոկոսը, մօտաւորապէս 180-200 հազար բնակիչ: Նորանկախ երկիր մը, որ ո՛չ միայն շրջափակուած էր թշնամիներով, ո՛չ միայն ծանրաբեռնուած էր գաղթականներով, այլև ստիպուած էր պայքար մղել անողորմ համավարակին դէմ:

Այսօր Առաջին Հանրապետութեան հիմնադրութենէն մէկ դար ետք, սահմանին սիրող պատերազմական իրավիճակի առկայութեամբ, գրութիւնը կը մնայ անփոփոխ, շրջափակուած թշնամիներով: 1991էն ի վեր Հայաստանը շրջափակուած է Ատրպէյճանի կողմէ, իսկ 1993էն ի վեր շրջափակուած են թուրքիոյ կողմէ:

Անկախութիւնը կը սկսի սահմանին վրայ, սահմանապահ գիւղերուն մօտ. Հայրենիքի լիարժէք պաշտպանութեան գրաւականը՝ սահմանին կանգնած հայ զինուորին եւ սահմանը հսկող գիւղացիին համասփիւռ հայութեամբ աջակցելու հրամայականն է:

Հայ ժողովուրդի անկախութիւնը գոյացած է Սարգարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէի յաղթանակները կերտած հայոց բանակի շնորհիւ, որուն շարունակութիւնն է այսօրուան մարտական պատրաստուածութեամբ եւ ռազմական սպառազինութեամբ յագեցած Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերը:

Հայաստանի առաջին Հանրապետութեան պատմութեան վերագնահատումը կատարելով, յստակ եւ անվիճելի կը դառնայ այն փաստը, որ հակառակ դժնդակ պայմաններու մէջ ընթացող պետականութեան նախաստղմաւորման եւ կազմաւորման գործընթացին, պատերազմի, համաճարակի եւ սովի անողորմ պայմաններուն, ճիւղերու գերագոյն լարումնով հիմը կը գրուէր հայութեան ապագայ շտապիչներու անկախ բնօրրանին:

1918ի Մայիսեան խոյանքներով դարձուեցան մեր պետականութեան հիմքերը եւ կանխորոշուեցաւ նորանկախ Հայաստանի գոյութիւնը:

1918ի Մայիսեան հերոսապատումով վերականգնեցաւ հայ ազգի դիմադրողականութեան գերակայութիւնը:

Մայիսեան յաղթանակներու կենսափորձը կ'իմաստաւորուի այն հասկացողութեամբ, որ համայն հայութեան գոյատեւելիութեան ռազմավարութիւնը այսօր էսպէս պէտք է խարսխուի այն յստակ նշաճողին վրայ, որ հայութեան բովանդակ ներուժով հայրենիքը վերածենք անխոցելի, կազմակերպ, միասնական, անբաժանելի եւ եւ պատմականօրէն հայապատկան տարածքները վերամիաւորելու ներուժ ունեցող երկրի:

«Հորիզոն»ի խմբագրական

www.horizonweekly.ca

Հայաստանի Առաջին Հանրապետության Ժամանակագրություն

1916–1917

- 1916-ին ռուսական բանակը հայկական կամա-ւորական գունդերուն օժանդակութեամբ կը գրաւէ Վանը, Կարինը, Տարօնը եւ Երզնկան։

- 28 Փետրուար 1917-ին, կը պայթի ռուսական մեծ յեղափոխութիւնը։ Կը կազմուի ժամանակաւոր նոր կառավարութիւն մը, որ արտօնութիւն կու տայ հայ գաղթականներուն վերադառնալ իրենց գիւղերը։

-1917 Սեպտեմբերին, Թիֆլիսի մէջ կը գումարուի Հայոց ազգային խորհրդաժողովը, որուն տնօրինումով՝ կարճ ժամանակ ետք, կը կազմուին Ազգային ժողովն ու Ազգային Խորհուրդը։

-1917 Հոկտեմբերին տեղի կ'ունենայ Համայնա-վարներու Հոկտեմբերեան յեղաշրջումը։ Համայնավար-ներու պետ Լենինի կոչը «դէպի տուն», մեծապէս հրա-պուրեց յոգնած ու յուսալքուած ռուս զինուորը, որ շտապեց Ռուսիա վերադառնալ։

- 500 քլմ. երկարութեամբ ճակատի վրայ, հայ-կական փոքրաթիւ գունդերը դէմ յանդիման կը մնան Թուրքիոյ դէմ։ Այս դժուարին պայմաններուն մէջ, Ազգային Խորհուրդը շուտով ռազմաճակատ կ'ուղարկէ հայկական նոր ուժեր. բանակը կը կազմակերպուի եւ ընդհանուր հրամանատար կը նշանակուի Թովմաս Նա-զարբէկեան։

-13 Դեկտեմբեր 1917-ին, Ազգային Խորհուրդի ջանքերով կը հիմնադրուի հայ ազգային բանակը, գօ-րավար Թովմաս Նազարբէկեանի հրամանատարու-թեամբ։ Բանակին կը վստահուի պաշտպանել Հայաս-տանի սահմանները ռուս բանակին «տունդարձ»էն ետք։

- 31 Դեկտեմբերին Անդրկովկաս կը հասնի Լենի-նի եւ Ստալինի ստորագրած յայտարարութիւնը, որ կը հրահանգէր ռուս զինուորներուն անմիջապէս լքել ռազմաճակատը եւ վերադառնալ տուն։

1918

- 1918 Յունուարի վերջերը Վէհիպ Փաշայի հրա-մանատարութեամբ, Թուրքերը կ'անցնին ընդհանուր հակայարձակողականի։

- Հայկական բանակին թիւը 17 000-ի կը հաս-նէր։ Թրքականը՝ 25 000, իսկ քիւրտ ու Թուրք զինեալ ազգաբնակչութեան հետ, թիւը կը հասնէր 50 000-ի։

- Թուրքերու առաջին թիրախը՝ Երզնկան, կ'իյ-նայ 30 Յունուարին։ 3 Փետրուարին կ'իյնայ նաեւ Բաբերդը։

- Փետրուարին կը կազմուի Սէյմը։ Հայերը ներ-կայացուած են Վ.Յ.Դաշնակցութեան պատգամաւորնե-րով։ Սէյմը անհաշտ է եւ տեւական վէճի նիւթ են պա-տերազմը, պետական կազմակերպութեան խնդիրը, սահմանային եւ այլ հարցեր։

- 16 Փետրուարին Սէյմը կ'որոշէ հաշտութիւն կնքել Թուրքիոյ հետ։

- Երզնկայէն Կարին կը փոխադրուի Թուրք-հայ-կական ճակատը, ուր կը գտնուէին Ապահովութեան Խորհուրդի հրամանատար Անդրանիկ, ռուս զինուորա-կաններ, Մուրատ, բժիշկ Զաւարեան եւ 4000 հայ զի-նուորներ։

- Կը գրաւուի Կարինը։

- Ապրիլի կէսերուն, Թուրքերու կողմէ կը գրաւ-ուի Վանը։

- 23 Փետրուարէն սկսեալ Թուրքիոյ եւ Անդր-կովկասի Սէյմի միջեւ կը սկսին բանակցութիւններ, որոնք կը տեւեն մինչեւ 1 Ապրիլ։

- 3 Մարտ 1918-ին կը ստորագրուի Պրէսթ-Լի-թովսկի դաշնագիրը։ Համայնավարները առանց հայե-րու կարծիքը առնելու, ո՛չ միայն Արեւմտահայաստա-նը, այլեւ՝ Կարսը, Արտասանը եւ Պաթումը կը յանձնէ-ին Թուրքերուն։

- 9 Մարտին, Սէյմը կ'որոշէ Անդրկովկասը ան-կախ հռչակել։

- 12 Մարտին, Չխենկելիի հրամանով Կարսը Թուրքերուն կը յանձնուի առանց դիմադրութեան։

- 23 Մարտին, Թուրքերը կը գրաւեն Սարըղամի-շը։

- 11 Մայիսին, երկու կողմերը կը սկսին Պաթումի բանակցութիւններուն։ Ռազմաճակատի վրայ հայու-թիւնը գաւաճանուած կը զգար Անդրկովկասի իր դաշնակիցներէն։

- Պաթումի մէջ, Թուրքերը հայերուն կ'առաջար-կեն 11 000 քառ. քլմ. տարածութեամբ Հայաստան մը՝ Արագածի եւ Սեւանի միջեւ, առանց Ալեքսանդրապոլի եւ Երեւանի։

-15 Մայիսին Թուրքերը կը յարձակին Ալեւանդ-րապոլի վրայ եւ կը գրաւեն գայն։ Թուրքերու այս յա-ռաջխաղացքէն շչմած էին Անդրկովկասի ազգութիւն-ները, նոյնիսկ Թուրքիոյ պատերազմական դաշնակից գերմանական պատուիրակութիւնը։

- Արարատեան դաշտին մէջ ապաստանած գաղ-թական եւ սովահար հայութիւնը կ'ապրի օրհասական ժամեր։ Գերմանիոյ սաստումներն ու սպառնալիքները ի գուր կ'անցնին, եւ Թուրքիա ժամը հասած կը նկատէ Թայէաթի եւ Էնվէրի երազները իրագործելու...

-15 Մայիսին Արամ Մանուկեան կը հռչակուի տիքթաթոր. ան կը մարմնաւորէ ու կը կենդանացնէ Հայ ժողովուրդի նորագոյն յարութիւնը, ոտքի հանելով ամբողջ հայութիւնը։

- 24-26 Մայիս Սարդարապատի եւ Ղարաքիլի-սէի մէջ տեղի կ'ունենան արիւնահեղ կռիւնքեր։ Հայերը կը մասնակցին ազգովին՝ այր, կին, երեխայ, ծեր, կրօ-նաւոր, գաղթական եւ զին-ւոր։ Թուրքերը կը կրեն պարտութիւն՝ բոլոր ճակատներուն վրայ եւ կու տան մեծ կորուստներ։

- 26 Մայիսին վրացիներու առաջարկով Սէյմը ինքզինք լուծուած կը հռչակէ։ Վրացիները կը յայտա-բարեն իրենց ազգային անկախութիւնը։

- 27 Մայիսին անկախութիւն կը հռչակեն ատր-պէյճանցիները։

- 23-28՝ տեղի կ'ունենան Բաշ Ապարանի պատմա-կան կռիւնքեր։ Արամի ընդհանուր հրամանատարութեան տակ, զօրավարներ Նազարբէկեանի, Սիլիկեանի, Արա-րատեանի, Դրոյի, Ղօրղանեանի եւ ուրիշներու վճռական հարուածներով նոր էջ կը բացուի հայոց համար։

- Մայիս 28-ին Հայոց Ազգային Խորհուրդը կը յայտարարէ Հայաստանի անկախութիւնը։

- 4 Յունիսին կը ստորագրուի խաղաղութեան դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիոյ միջեւ։ Հայաստան 12 000 քառ. քլմ. է։ Վարչապետ Քաջագնունի կը կազմէ Հանրապետութեան առաջին դահլիճը։

- 1 Օգոստոսին տեղի կ'ունենայ հանդիսաւոր բացում Հայաստանի Օրէնսդիր ժողովին։

- 15 Սեպտեմբերին, երկար հերոսամարտերէ ետք, Պաքուն կ'իյնայ Թուրքերու ձեռքը եւ 30 000 հայ կը կոտորուի։

- 21 Հոկտեմբերին Լոռիի Բամպակի շրջանը կ'անցնի հայերուն ձեռքը։

- 11-18 Նոյեմբերին կը հռչակուի ընդհանուր զինադադար։ Հայկական զօրքերը մուտք կը գործեն Ղարաքիլիսէ։

- 2 Դեկտեմբերին հայ բանակը կը վերագրաւէ Ալեքսանդրապոլը եւ գայն կը կցէ Հայաստանի Հան-րապետութեան։

- 5 Դեկտեմբերին վրացական զօրքերը կը գրաւեն Ալեքսանդրապոլը։

-13 Դեկտեմբերին կը սկսի Հայ-Վրացական պա-տերազմը։ Հայերը կը յաղթեն բոլոր ճակատներուն վրայ եւ կը հասնին վրացական սահման։

1919

- 24-28 Ապրիլ 1919-ին Կարսը կ'անցնի հայոց ձեռքը։

- 13 Մայիսին առանց կռուի Հայկական բանակը կը մտնէ Օլթի եւ Կազգուան։

- 20 Մայիսին Հայկական բանակը կը գրաւէ Նախիջևանը։

- 28 Մայիս 1919-ին, Հայաստանի կառավարու-թիւնը կը յայտարարէ Անկախ, Միացեալ եւ Ժողովր-դավար Հայաստանի Հանրապետութիւն։

- 1 Օգոստոսին Աւետիս Սահակեանի նախագա-հութեամբ տեղի կ'ունենայ Հայաստանի նորընտիր խորհրդարանի հանդիսաւոր բացումը։

- 5 Օգոստոսին Ալ. Խատիսեան կը կազմէ նոր կառավարութիւն։

1920

- 19 Յունուար 1920-ին դաշնակիցներու գերա-գոյն խորհուրդը Տը Փաքթօ կը ճանչնայ Հայաստանի կառավարութիւնը։

- 4 Ապրիլին, Ատրպէյճանի Թուրքերը կը կազ-մակերպեն Շուշիի հայութեան կոտորածը։ Ղարաբաղի մէջ տեղի կ'ունենան բախումներ՝ հայերու եւ Թուրքե-րու միջեւ։

- 5 Մայիսին Խատիսեան խորհրդարանին կու տայ իր հրաժարականը։

- ՀՅԴ Բիւրոն իր լրիւ կազմով կ'անցնի իշխա-նութեան գլուխը։

- Մայիսին, բոլշեւիկները կը կազմակերպեն խու-վութիւններ, որոնք անմիջապէս կը ճգմուին կառավա-րութեան կողմէ։

-10 Օգոստոսին, Աւետիս Ահարոնեան կը ստո-րագրէ Սեւրի դաշնագիրը։

- Ըստ Սեւրի դաշնագրին Հայաստան կ'ունենայ մօտաւորապէս 162 000 քառ. քլմ. տարածութիւն, ծո-վային ելքով։

- 23 Սեպտեմբերին Թուրքերը յարձակումի կ'անցնին ու կը սկսի Հայ-թրքական պատերազմը։

- 20-26 Հոկտեմբեր Սուրմալուի ճակատին վրայ տեղի կ'ունենան արիւնալի կռիւնքեր։ Դրոյի ղեկավա-րութեամբ Թուրքերը կը ջախջախուին։

- 30 Հոկտեմբերին Համօ Օհանջանեանի կառա-վարութիւնը կը հրաժարի։ Երկու օր ետք, Վրացեան կը կազմէ իր դահլիճը։

- 29 Նոյեմբերին, Ատրպէյճանի եւ Կարմիր բա-նակի օգնութեամբ՝ Հայ համայնավարները կը մտնեն Իջևան։

- 30 Նոյեմբերին, Համայնավար Կուսակցութեան եւ Խորհրդային իշխանութեան կողմէ Լըզրան (խորհր-դային պատուիրակ) վերջնագիր կու տայ Հայաստանի կառավարութեան՝ խորհրդայնացնելու Հայաստանը։

- 2 Դեկտեմբերին Ալեքսանդրապոլի մէջ կը ստո-րագրուի հաշտութեան դաշինք՝ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ։

- 2 Դեկտեմբերին Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչներու եւ Լըզրանի միջեւ ստորագրուած համաձայնագիրով՝ Հայաստան կը հռչակուի Խորհրդա-յին հանրապետութիւն։

- 25 Դեկտեմբերին Զանգեզուրը Գարեգին Նժդեհի ղեկավարութեամբ կը հռչակուի ինքնավար մարզ։

1921

- 24 Յունուար 1921-ին Հայաստանի բանակի սպաները՝ 1200 հոգի, կ'աքսորուին Ռուսաստան, անոնց մէջ նաեւ զօրավարներ՝ Սիլիկեան, Հախվերդեան եւ Ապարապետ Նազարբէկեան։

-18 Փետրուար 1921-ին, ընդհանուր ապստամ-բութիւն բողշեւիկեան բռնատիրութեան դէմ։

- 16 Մարտին կը ստորագրուի Մոսկուայի դաշ-նագիրը, եւ Կարսն ու Արտասանը կը նկատուին Թրքա-կան։ Նախիջևանը կը յանձնուի Ատրպէյճանին։

-13 Հոկտեմբերին Խորհրդային Հայաստան եւ Թուրքիա կը ստորագրեն Կարսի դաշնագիրը։



ՈՒՍԱՒՈՐԻՉ



ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ



Գ. ՏԱՐԻ, ԹԻՄ 7, Յունիս 2020

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

ՃԱՇԱԿԵՆՔ ԱՆՈՐ ՔԱՂՅՐՈՒԹԻՒՆԸ



Իրաքանչիւր քրիստոնէայ հաւատացեալ պէտք է առիթ ունենայ մտածելու իր պարտականութիւններուն ու առաջնահերթութիւններուն մասին, յատկապէս՝ Աստուծոյ և իր նմանին հանդէպ: Այդ պարտականութիւններէն գլխաւորագոյնն է՝ սիրել զԱստուած, յաճախ հաղորդակցութեան մէջ ըլլալով Անոր հետ: Նոյնքան կարևոր է նաև սիրել ընկերը՝ մեր նմանը, օգնութեան ձեռք երկարելով կարօտեալին և զրկեալին:

Այս պարտականութիւնը լաւագոյնս կատարելու և գիտակցական մօտեցում ցուցաբերելու համար, անհրաժեշտ է խղճի քննութիւնը՝ ինքնամփոփ մտքով, խոստովանութեամբ և ապաշխարութեամբ, երկիւղածութեամբ և սրբութեամբ, համարձակօրէն մօտենալու և հաղորդուելու Անոր, որ Իր կեանքը տուաւ մեզի համար, յոյս

ներշնչեց, քաւութիւն և թողութիւն շնորհեց մեր մեղքերուն:

Առնուազն տարուան մեծագոյն տօներուն Քրիստոսի Ս. Մարմինով ու Արեանք հաղորդուիլը անհրաժեշտ է՝ Իրմով զօրանալու և ներշնչուելու՝ մաքուր և անբիծ խորհուրդներով ու զգացումներով:

Այսօր շատ կը լսենք՝ **«Ինչո՞ւ յաճախ պէտք ունիմ հաղորդուելու»**, կամ թէ՛ **«հազիւ կը յիշեմ, որ վերջին անգամ երբ հաղորդուած եմ»**:

Եթէ իսկապէս կ'ուզենք ճշմարիտ աստուածապաշտութեան դառնալ, բարի ըլլալ՝ հեռու մնալով ամէն տեսակի աղտոտութենէ ու փորձութենէ, ուրեմն՝ պէտք է երկիւղածութեամբ և յաճախակի հաղորդուիլ:

Այո՛, երկիւղածութեամբ և մանաւանդ բարեպաշտութեամբ, այսինքն՝ աղօթքով ու խոր հաւատքով, մէկ խօսքով՝ թեթևօրէն չմօտենալով Աստուծոյ և մանաւանդ Ս. Մարմինն ու Արեանք: Երկիւղածութեամբ և բարեպաշտութեամբ հաղորդուիլ կը նշանակէ՝ Տիրոջ ներկայութիւնը զգալ և Անոր կեանքի օրինակով ապրիլ, ինչպէս Պողոս առաքեալ կ'ըսէ. **«Ես չեմ, որ կ'ապրիմ, այլ Յիսուսն է, որ իմ մէջս կ'ապրի»**: Մէկ խօսքով՝ Անոր քաղցրութիւնն ու սրբութիւնը Ս. Հաղորդութեամբ մեր մէջ պէտք է բնակի:

Այո՛, երբ յաճախ Ս. Հաղորդութիւն կը ստանանք, առաւել սրբութեամբ կը լեցուինք, անի թաղցր ու խոնարհ կ'ըլլանք, և մանաւանդ երջանիկ ու խաղաղ կեանք կ'ապրինք:

Յիսուս Քրիստոսի հետ հաղորդութիւնը մեզմէ իրաքանչիւրին առիթը կու տայ լոյսի որդիներ դառնալու և մանաւանդ՝ աստուածային կեանքի գեղեցիկ ճանապարհէն քալելու:

Հետևաբար, չվարանիք յաճախ հաղորդուելու, երբ պատրաստ կը զգանք մենք մեզ:


Չհաղորդուիք ձևականութեամբ, թեթևօրէն չմօտենանք Սրբութեան, այլ երկիւղածութեամբ, հաւատքով, սրբութեամբ մօտենանք և հաղորդուինք:

Այո՛, մօտենանք Տիրոջ, ճաշակենք և տեսնենք, թէ **ՈՐՔԱՆ ՔԱՂՅՐ Է ԱՆ ԵՒ ՅԱՐԻՏԵՆԱԿԱՆ**:

Բարգէն Արքեպիսկոպոս

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ




Աստուած մարդը ազատ արեղծեց: Անոր ոչինչ պարտադրեց: Ուզեց, որ ան իր ազատ կամքով գտնէ իր Արարիչը և պաշտէ զայն: Ազատութիւն տուաւ անոր, որ ինք ըլլայ իր գործին և իօսքին պարտասխանատուն և այսպէս ապահովէ իր երջանկութիւնը, որովհետեւ բանականութեամբ կրնար ճանչնալ բարին ու չարը, վնասակարն ու օգրակարը:

Ահա թէ ինչու միշտ ընտրելու իրաւունք ունի մարդը: Քրիստոնէային պարտաւորութիւնն է ընտրել բարին և իր ապրած կեանքը օգրագործել բարիք ընելու: Մարդ արարածը պէտք է գիտնայ մանաւանդ, որ իր ազատութիւնը կանգ կ'առնէ հոն, ուր կը սկսի ուրիշներուն ազատութիւնը:

Արդարև, քրիստոնէական կրօնին պարտաւորանները, երբ կը իօսին բարիք գործելու մասին, պարճաւոր այն է, որ բարիքը միայն կը զսպէ մեր չար բնազանդերը և միաժամանակ բոլորին համար բարի է:



ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ



Աստուածաշունչը քրիստոնէական Եկեղեցոյ հաւատքի սրբազան գիրքն է: Անոր առաջին մասը, Հին Կտակարանը, հաւատքի սրբազան գիրքն է նաև Հրէութեան՝ երբայեցի ժողովուրդին: Երկու կրօններն ալ զայն կը ճանչնան իբրև հիմը իրենց հաւատալիքներուն, առանց որուն չկան այս կրօնները:

Ինչ է Աստուածաշունչը: Ինչ կը հասկնանք **«հաւատքի սրբազան գիրք»** ըսելով: Եւ ի՞նչ է անոր տարբերութիւնը՝ ուրիշ կրօններու սրբազան մատեաններէն: Աստուածաշունչը կարելի է սահմանել քանի մը բացատրութիւններով.-

1.- Աստուծոյ յայտնութիւնն է:

Աստուածճանաչութեան աղբիւրն է Աստուածաշունչը: Մենք Աստուծոյ մասին բան պիտի չգիտնայինք, եթէ Աստուած ինք յայտնէր մեզի: Աստուած ինքզինք կը յայտնէ իբրև կատարեալ լոյսը, Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին բանաձևումով՝ **«Առաջին Լոյսը»**. և ինչպէս որ մենք այս աշխարհի լոյսը՝ արեգակը կը ճանչնանք միայն իր լոյսով, այնպէս ալ Աստուծոյ պարագային, միայն իր լոյսով կրնանք ճանչնալ զայն. **«Լոյստ՝ վղ է որ մենք լոյսը կը տեսնենք»** (Սղ 36.9): Եւ Աստուածաշունչը այն գիրքն է, կամ գիրքերու ամբողջութիւնը, որ կը պատմէ Աստուծոյ մասին, մեզի կը յայտնէ.-

ա.- Անոր ճշմարիտ ինքնութիւնը, Անոր նկարագիրը՝

- *Ճշմարտութիւնը* (Հայրը՝ Յհ 3.33, 7.28, 8.26, 17.3: Որդին՝ Յհ 14.6: Եւ 4.21: Ա.Յհ 5.20: Յյր 3.7 և 14, 19.11: Ս. Հոգին՝ Յհ 14.17: Ա.Յհ 2.27, 4.6, 5.6: Աստուած՝ Յհ 1.9: Հո 3.4: Ա.Թս 1.9: Ա.Յհ 5.20: Յյր 6.10):

- *Սրբութիւնը* (Հայրը՝ Յհ 17.11: Որդին՝ Դն 9.24: Սր 1.24: Ղկ 1.35: Գրծ 3.14, 4.27: Ա.Յհ 2.20: Յյր 3.7, 15.4, 16.5: Հոգին՝ Սղ 51.11: Ես 63.10-11: Սր 1.18 և 20, 3.11 կլն: Աստուած՝ Ղւ 11.44-45, 19.2, 20.7, 21.8, Ա.Պր 1.16: Ա.Թգ 2.2: Սղ 22.3, 78.41, 99.5 և 9: Ես 1.4, 5.16, 6.3: Եր 51.5: Յյր 4.8, 6.10):

բ.- Անոր գործերը՝ արեղծագործութիւնն ու նախաինսամութիւնը

2.- Աստուած-մարդ յարաբերութեան պատմութիւնն է:

Աստուածաշունչը կ'արտացոլացնէ Արարիչին և արարածին կապը՝ իր դրախտային և երկրաւոր կրկնակ երեսներով: Կապ մը, որ երկինքով կը սկսի, դրախտային պայմաններուն մէջ սկիզբ կ'առնէ, և հակառակ մարդուն անհնազանդութեան և մեղանչումով անկումին՝ կը շարունակուի անընդմիջաբար, ասարտելու համար դարձեալ երկինքով, ուր կը հրաւիրուի մարդը Աստուծոյ կողմէ, որպէսզի աստուածահաստատ նպատակը իր լրումին ու կատարումին

հասնի: Պատմութիւն մը, հետևաբար, որուն առաջին ու վերջին օղակները երկինքին ազուցուած են, և որուն միջին երկու օղակներն են՝ մարդուն մեղանչումն ու մահուան դատապարտութիւնը, որ մարդը կը կապէ երկրին, և Քրիստոսի խաչը, որ մարդս մեղքի դատապարտութենէն ազատագրելով կը կապէ երկինքին:

3.- Աստուծոյ Ուխտին գիրքն է:

Աստուած և մարդ յարաբերութիւնը վերև նշուածով չ'ըսպառիր: Կապը նշանակ է կապուածութեան, ինչպէս ծնողի մը և իր ծնունդին: Աստուած, իբրև մարդուն հոգևոր ծնողը, իր ծնունդին հետ իր կապը կը պահէ ո՛չ միայն արարչական մնայուն խնամածութեամբ (=նախախնամութիւն), այլ նաև փրկագործական ճիգով մը, որ նախապատրաստութիւնն է ամբողջական փրկութեան: Այլ խօսքով, անիկա Աստուծոյ փրկութեան Ուխտին արտայայտութիւնն է, փրկութեան խոստումը և անոր հետապնդման պատմութիւնը:

Փրկութեան այդ նախապատրաստութիւնը Աստուած կը կատարէ՝ եօթը ուխտեր կնքելով մարդուն հետ, կամ, թերևս ավելի ճիշդ կ'ըլլայ ըսել, եօթնապատիկ ուխտ մը կնքելով մարդ արարածին հետ: Ուխտ մը, որուն արձանագրութիւնը և պատմութիւնն է Աստուածաշունչը: Ուխտ մը, որ.-

ա.- Թէ՛ հաշտութեան դաշինք է (Նոյի հետ, տես Ծն 9.8-17),

բ.- Թէ՛ արդարացման միջոց (Աբրահամի հետ, տես Ծն 15.9-21),

գ.- Թէ՛ Աստուծոյ պարկանկութեան նշան (Աբրահամի հետ, տես Ծն 17.1-14),

դ.- Թէ՛ օրինապահութեան համաձայնութիւն (Մովսէսի հետ, տես Ելք 24.3-8),

ե.- Թէ՛ քահանայութեան միջնորդութեամբ մեղքերու քառութիւն (Փենտեկոստի հետ, տես Թւ 25.10-31),

զ.- Թէ՛ թագաւորութեան խոստում (Դաւիթի հետ, տես Բ.Թգ 7.5-16), և

է.- Թէ՛ փրկութեան պարզև (իր նոր ժողովուրդին հետ, տես Եր 31.31-34):

(Շարունակելի)

**Հայրուած՝
«Աստուածաշունչին Վերաբերեալ
Ուսումնասիրութիւններ» աշխատանքէն**



ՀԱՒԱՏՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ




ՀՌԻՓՄԻՄԵԱՆՑ ԿՈՅՍԵՐ

Ծագումով հռոմայեցի կոյսեր էին, որոնք երկրորդ դարու վերջաւորութեան Հռոմի Ս. Պօղոս առաքեալի վանքին մէջ աղօթական կեանքով կ'ապրէին, որոնց մեծաւորութիւն էր՝ Գայեանէ անունով կոյս մը: Այս վանքին մէջ կը գտնուէր նաև ազնուական ծագում ունեցող սքանչելի գեղեցկութեամբ օրհորդ մը՝ Հռիփսիմէ անունով: Իրոկղետիանոս կայսրը հմայուած Հռիփսիմէի գեղեցկութեամբ՝ կ'ուզէր հետը ամուսնանալ. 70 կոյսերը իմանալով կայսեր մտադրութիւնը, խոյս կու տան դէպի Հայաստան ու կ'ապաստանին Վարազայ լեռան մերձակայքը: Կայսրը անմիջապէս նամակ կը յղէ Հայոց Տրդատ թագաւորին, որպէսզի կոյսերը ձերբակալէ և Հռոմ դրկէ: Տրդատ թագաւոր կը յայտնաբերէ փախստական կոյսերը և ցանկութեամբ լեցուելով կ'ուզէ ամուսնանալ Հռիփսիմէի հետ, սակայն կոյսերը կ'ընդիմանան: Այնուհետև, Տրդատ կը հրամայէ բերել Գայեանէն, Հռիփսիմէն և 32 այլ կոյսեր, աննկարագրելի չարչարանքներու ենթարկելով վերջ գլուխները սուրով հատել կու տայ 301 թուականին:

Այս շրջանին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ կը գտնուէր Խոր Վիրապին մէջ: Նահատակ կոյսերու մարմինները 9 օրեր անթաղ կը մնան իրենց նահատակութեան վայրերուն մէջ, սակայն ոչ մէկ գազան կը մօտենայ ուտելու համար անոնց մարմինները:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Խոր Վիրապէն դուրս գալէ ետք, պատուով կը թաղէ կոյսերուն մարմինները և վկայարան մը ալ շինել կու տայ: Ս. Սահակ Հայրապետ, 5-րդ դարուն կը փնտռէ կոյսերու նշխարները, կը հանէ զանոնք և նոր վկայարան մը կը շինէ անոնց վրայ: Ի վերջոյ, 7-րդ դարուն Կոմիտաս Կաթողիկոս ևս կը հանէ կոյսերուն տապանը, մեծ վկայարան մըն կը շինէ և այդ առիթով կը յօրինէ իր նշանատր «Անձինք նուիրեալք» շարականը:

ՊԱՅՔԱՐ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Ընկերութեան մէջ քրիստոնէան պէտք է ըլլայ այն անձը, որ կը պայքարի մարդկային հասասարութեան և ընկերային արդարութեան սկզբունքներուն համար:

Բոլոր մարդիկ նոյն հոգին ու բնութիւնը ունին և հեղուարար՝ նոյն իրաւունքները:

Մեր Տէրը Յիսուս ոչ թէ մասնատրներուն համար, այլ բոլորին փրկութեան համար զոհեց ինքզինք:

Ճիշտ է, որ մարդիկ չունին նոյն մտաւոր, հոգևոր և մարմնատր կարողութիւնները, սակայն այդ մէկը պարճատ մը չէ, որ անոնք զրկուին իրենց մարդկային հիմնական իրաւունքներէն:

Քրիստոնէան կը մերժէ ամէն տեսակի խտրականութիւն, որ հիմնուած է՝ ցեղի, գոյնի, լեզուի և ընկերային դիրքի վրայ:

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՅԻՍՈՒՄԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԷՆ

«Եթէ եղբայրդ մեղք գործէ՝ յանդիմանէ՛ զինք, և եթէ զղջայ՝ ներէ՛ իրեն: Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի դէմ մեղանչէ և եօթ անգամ քեզի գալով ըսէ՝ «Կը զղջամ», պէտք է ներեալ իրեն» (Ղկ 17. 3-4):

Այն արեւն Պետրոս մօտեցաւ Յիսուսի և հարցոց. «Տէ՛ր, քանի՞ անգամ եթէ եղբայրս մեղանչէ ինձի դէմ՝ պէտք է ներեմ իրեն. մինչև ե՞՞՞՞թը անգամ»: Յիսուս պատասխանեց. «Ոչ թէ եօթը անգամ, այլ եօթանասուն անգամ եօթը» (Մր 18. 21-22):



Youth Spotlight

Q&A with Archbishop Papken



June 22 @ 8pm

Join the conversation LIVE on Facebook and Instagram

 @armenianprelacyofcanada  Armenian Prelacy of Canada
to submit questions, please email:
youthministry@armenianprelacy.ca



ՈՒՍԱԲՈՐԻՉ



«ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ»

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի Կրօնական Յայտագիր

Իրաքանչիր ամիս հետեւեցէք մեր յայտագիրին ընկերային ցանցերու եւ youtube -ի մեր էջերուն միջոցաւ




Armenian Prelacy of Canada

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ

Թուանշանները միացնելով տնն, թէ ինչ պատահեցաւ Յովնան Մարգարէին:
Ան կը խեղդու՞ի ծովուն մէջ...

Աւելին գիտնալու համար կարդա՛ Յովնան 1. 1-17 համարները



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prelature Armenienne du Canada



514-856-1200
prelacy@armenianprelacy.ca
www.armenianprelacy.ca



Խմբագիր՝ Քրիստափոր Միքայէլեան
3401 Olivar Asselin
Montreal, Quebec H4J 1L5

Chair of Canada-Artsakh Parliamentary Friendship Group Rachael Harder congratulates Artsakh's newly-elected president

OTTAWA—Chair of Canada-Artsakh Parliamentary Friendship Group, Member of the Canadian Parliament Rachael Harder on May 25 addressed a congratulatory message to the President of the Republic of Artsakh Arayik Harutyunyan, reports Artsakhpress. Below is the text of the message:

“Dear President Harutyunyan,

I am writing to congratulate you and people of Artsakh on successful elections on March 31, and the presidential run-off vote on April 14, 2020. It is inspiring to witness that Artsakh continues to register progress in democratic development even in conditions of unresolved regional political and economic challenges.

Furthermore, I wish to congratulate you on being elected as President of the Republic of Artsakh.

Your decisive victory in competitive elections serves as a strong mandate from your compatriots to continue consistent development of Artsakh

as a sovereign, democratic, and economically prosperous Republic. You have much to be proud of.

As you assume your responsibilities, you do so at a time when Artsakh faces various unresolved regional political and economic challenges. As Chair of the Canada-Artsakh Parliamentary Friendship Group, I can assure you that we will continue raising awareness about your cause, and support Republic of Artsakh in your aspirations for sovereignty.

I wish you and your administration every success in your important mission, and productive service on behalf of the people of Artsakh.”

Yerevan says Baku undermines peace

YEREVAN—Armenia's Foreign Ministry on May 21 said that Armenia will continue to protect the rights of the people of Artsakh to self-determination, adding that through its threats and military actions, Baku is undermining any semblance of peace.

The announcement was in response to a statement issued by Azerbaijan's foreign ministry, which threatened military action and accused Armenia of advancing an “annexation” policy citing Prime Minister Nikol Pashinyan's attendance at the inauguration of Artsakh President Arayik Harutyunyan.

“It's worth mentioning that the threats of war or military

posturing communicated either through statements or large-scale military exercises in violation of international commitments, represent traditional components of Azerbaijan's destructive stance, which has no impact either on the position of the Armenian sides in the Nagorno Karabagh issue or on the ongoing democratic processes in Artsakh,” said Armenia's foreign ministry spokesperson Anna Naghdalyan.

“Nevertheless, they [Azerbaijan] definitely undermine the establishment of an environment conducive to peace, which is necessary for the consideration of substantive issues,” added Naghdalyan.

President Sarkissian meets with ARF leaders

YEREVAN—President Armen Sarkissian on May 20 met with Armenian Revolutionary Federation Supreme Council of Armenia chairman Ishkhan Saghatelian and ARF Bureau member Arsen Hambartsumyan to discuss the socio-economic impact of the global COVID-19 pandemic on Armenia.

The meeting was part of the president's outreach to experts, civic organizations, as well as parliamentary and extra-parliamentary forces in Armenia to discuss the economic impact of the pandemic and the challenges that it has posed for Armenia.

The president and the ARF leaders agreed that only through a united effort can the challenges brought on by the coronavirus crisis be resolved. The ARF representatives presented their vision and possible

avenues to resolve the crisis.

Views were also exchanged on domestic and foreign policy issues, as well as matters of national interest, among them the commemoration of the 105th anniversary of the Armenian Genocide last month, as well as the centennial of the Sevres Treaty in August and the upcoming anniversary of the Armenian Independence.

The ARF leaders briefed the president on some of the important ARF programs and events that were postponed because of the COVID-19 crisis.

They also welcomed the president's proposed plan to create a vast park around the Dzidzernagapert Armenian Genocide memorial that will be representative of all facets of Armenians, saying that it is of national importance and aims at advancing national unity.

Czech Senate unanimously recognizes Armenian Genocide

PRAGA—The Czech Senate condemned the crimes against humanity committed by Nazis during World War II and the Armenian Genocide committed by the Ottoman Empire in a resolution unanimously adopted on May 20.

“At its plenary session on May 20, the Senate of the Czech Republic unanimously adopted a resolution on the 75th anniversary of the end of World War II and the atrocities committed against humanity during the two world wars, including the condemnation of the Armenian Genocide,” reads the text of the resolution, which was presented by the senate's Vice-President Milan Štěch.

